



ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

ԲԵ ԻՆՉ Է ԱՐԵԼ ՄԱՅՏՈՅՑ ՍԱՄՈՎԱՏՈՒՄ

Առանձնահատվածը՝ Ն. Շոյք տեղական կարիքների «Գելատուրյունների» № 2-ից



ԳԵՂԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱԿԻ ՀՐԵՏԱՐՈՒՅԹՈՒՆ



ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎՈԿ

ԲԵՒՆՉԻ Է ԱՐԵԼ ՄԱՇՏՈՑԸ ՍԱՄՈՍՎՏՈՒՄ

ԿՈՐՅՈՒՆԻ «ՆՐԱԳՈՒՅՑ», «ԼԱՅՆԱԳՈՒՅՑ», «ԿԱՐԺ», «ԵՐԿԱՅՆ», «ԱՌԱՋԻՆ» եւ
«ԿՐԿՆԱԿՈՐ» ՏԵՐՄԱՆՆԵՐԻ ՃԵՏԱՍԱ ԱՌԹԻՎ¹

Մեսրոպ Մաշտոցի կինսագիր Կորյունի «Մաշտոցի վարքի» մի փոքրիկ հատված երկար ժամանակ չի հեռանում հայագիտական բանասիրական գրականության հայ և օտար շատ ներկայացուցիչների ուշադրությունից և առիթ է տալիս ամենաբազմազան, նույնիսկ հակասական մեկնությունների։ Այդ հատվածով է, որ պետք է պարզվի, թի Մեսրոպը Եղեսիայում հայոց տառերը հորինելոց հետո ինչու գնաց Սամոսատ, ինչ արեց այնտեղ «Հույն զրիչ» Հոսովանոսի օգնությամբ, և ինչ էր Հոսովանոսի օգնությունը Մեսրոպին։ Այդ հատվածի ճիշտ մեկնաբանությունն ու կարևորությունը հասկանալու համար բավական է հիշեցնել, որ նրա հիման վրա որոշ բանսաերներ Հոսովանոսին վերագրում են տեխնիկական-գծագրական համեստ աշխատանք, ուժանք, ընդհակառակին, լիովին նրան են վերագրում մեր տառերը ձևագրելու ստեղծելու աշխատանքը՝ Մեսրոպին թողնելով միայն հնչյունների գյուտը, մյոււները Հոսովանոսին դարձնում են Մեսրոպի հորինած տառերի հիման վրա այլևայլ տառատեսակներ (շրիֆտներ) պատրաստելու պատրիվը, ուժանք էլ նույն այդ հատվածի հիման վրա, իմաստնանում են Ժխտել հայերեն տառերի գյուտը Մեսրոպի ձեռքով և առասպելական ու անվավեր համարել Կորյունի մեջբերած պատմությունը։

Մնում է միայն զարմանալ, որ այսքան տարածայնությունների տեղիք տվող հատվածը, որ ինքնին ոչ մութ է ու խթին և ոչ էլ պարունակում է մութ կամ անծանոթ բառեր, մացել է մինչև այժմ չլուծված։ Հարցի լուծման դժվարությունը

1 կարդացված է Երևանի Պետական Համալսարանի Գիտական սեսիա-յում 1943 թվի ապրիլի 29-ին:

այստեղ պայմանագործած է ոչ թե բնագրով, այլ բանասերների մեթոդաբանությամբ, հարցի անձիշտ գրվածքով և մեկնությունների կամայականությամբ։ Բանասերները, սակավ բացառությամբ, ցանկացել են իրենց ենթադրած այս կամ այն իմաստը տալ կորյունի գործածած նրագույն, լայնագույն, կարն, երկայն, առանձին ու կրկնավոր տերմիններին, փոխանակ ենելու այդ բառերի այն իմաստից, որ նրանք ունեին ճշրդ դարում։ Մեսրոպի ու կորյունի ժամանակ և մերձավոր զարերի գիտական դրականության մեջ բանասերները աչքաթող են արել որ աչք բառերը գիտական տերմիններ են, նոր իմաստավորման կարիք չեն զգում։ Բանասերների մի ուրիշ սխալն էլ այն է, որ նրանք աչքաթող են արել այն հանդամանքը, որ ինչպես ճշրդ դարում, այնպես էլ նրանից շատ հետու տառ և նշանազիր տերմիններով հասկանում էին աչքայն տառերը (զբերը), այլև հնչյունները։

Մեթոդաբանական այս արատներին պետք է վերագրել այն, որ «Մեսրոպի Վարքի» այդ շատ պարզ ու հասկանալի հատվածը մինչև այժմ ճշշտ չի հասկացվել։

Այս այդ հատվածը.

«Եւ անզէն ի նմին քաղաքի (Սամոսատում—Գ. Ս.) գրիչ ոմն հելլենական զպրութեան Հոռվանոս անուն գտեաւ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն¹ և զլայնտգոյնն², զկարճն ու զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտոքն իւրովիք³։

Արդ, տեսնենք, թե ինչպես են հասկացել ու մեկնել այս հատվածը մինչև այսօր։

1. «Հայոց գիրը» մեծածավալ աշխատության հեղինակ իս. Հարությունյանը գտնում է, որ Մաշտոցը Հոռվանոսին դիմել է, որպեսզի տառերին վայելուչ ձեւ տա, որոշե նոցա երկարությունն ու կարճությունը... Մեսրոպն յուր կատարելազործած այբուբենին վերջնական ձեւ տվեց այդ Հոռվանոսի օգնությամբ... տառերի ձեռքը մի հմուտ գրագրի ձեռքով—ինչպիսին էր Հոռ-

¹ Առաջ ձեռագրերում՝ զնրբագոյննեն։

² Այս լայնագույնն բառը բնագրի մեջ ներմուծել է Մ. Աբեղյանը՝ «Րաբուազրերի հիման վրա»։

³ Կարյուն—Վարք Մաշտոցի. Երևան, 1941 թ. էջ 48—50 (պրոֆ. Աբեղյանի առաջաբանով, ծանոթաւթյուններով և թարգմանությամբ)։

փանոսը պատմագիրների վկայությամբ—կարող էին շուտով ձեւվակերպվելը (էջը 172, 366—367):

Այսպիսով ուրիմն, ըստ իս. Հարությունյանի¹, Հոռփանոսը սոսկ զրագիր կամ զեղագիր էր, որի օգնությամբ Մաշտոցը վայելու ձեւ տվեց իր տառերին, որոշեց նրանց երկարությունն ու կարձությունը, տառերի ձևերը ձեակերպեց: Եթե ընդունենք, որ երկարությունն բառի տակ Հարությունյանը ամփոփում է Կորյունի կարճ և երկար տերմինների իմաստը, իսկ նաև տուրյուն բառի տակ՝ նըրազույն և լայնագույն տերմինների իմաստը, այնուամենայնիվ պետք է արձանագրենք, որ Կորյունի առանձին և կըրկնավոր տերմինները այս հետազոտողը մատնում է անուշագրության, ուրեմն՝ լրիվ չի պարզում Կորյունի տեքստը, հետեւաբար և Հոռփանոսի դերը:

2. Անվանի հայագետ Մարկվարտը իր հայոնի աշխատության մեջ² այսպես է մեկնաբանում մեզ զբաղեցնող հատվածը. «Առանձինն և կրկնավոր նշանագրերով նաև պետք ենք համենալ կրկն և և ները, ինչպես նաև և և վ, որոնցմեն և և վ միայն սկզբնատառ կկազմեն: Թե և և թ դ դ ի և ո ո ի համեմատությամբ «բուն» ձայն կամ նշանագիր նկատված են, կապացուցվի նաև այնու, որ օտար բառերու և անվանց սկզբնատառ և և գրերուն տառագարձության մեջ երկու ձեերն ալ հավասար գործածական են. նաև աղփարետքի մեջ հույն և և թ տառերուն տեղը կգրավեն: Կարն և երկայն նշանագրերով ընդհակառակն պիտի իմանանք անշուշտ ձայնավոր նշանագրերը» (էջ 31):

Այսպիսով, ըստ այս հետազոտողի, Մաշտոցը Հոռփանոսի հետ լուծել է զույգ բաղաձայնների տառերի (և և դ, ը և ո, և և վ) և ձայնավորների տառերի հարցը (կարճ ու երկար): Այս հետազոտողն էլ անուշագրության է մատնում Կորյունի նըրազույն և լայնագույն տերմինները՝ ըստ երկույթին չգտնելով նրանց հարմարվող բացատրություն: Մարկվարտը տարբերվում է Հարությունյանից նաև նրանով, որ խոսում է ոչ թե տառերի չափերի ու ձեերի մասին, այլ առանձին տառերի ընտրության:

3. Մեկ ուրիշ անվանի գիտնական միանդամայն այլ մոտեցում ունի այս հարցին և անսպասելի լուծում է տալիս Կորյունի

¹ Իս. Հարությունյան—Հայոց գիրը. Թիֆլիս, 1892:

² Պատմություն հայոց նշանագրերու վարուց Ս. Մաշտոցի. գրեց պլուֆ.

Դոկտոր Մարկ Վարդակական, Վիեննա, 1913 թ.

բնագրի տվյալ հատվածին՝ Դա հանգուցյալ իվանե Զավախիշ-
շվիլին է, որը իր «Հին հայկական» պատմական գրականության
պատմության» 1-ին հատորում¹, որ տպված է վրացերեն և ան-
ծանոթ է մնացել մեր հայոցեաներին, հետեւյան է պուլ։

«Սակայն Կորյունը դրանով էլ չի բավարարվում. նրա խոսքից երեւմ է, որ Սամոսատ(?, Գ. Ա.) քաղաքում աստվածային աջով գրոշմված տառերն էլ գոհացուցիչ չեն եղել. նրանք չեն ունեցել բազմակողմանի հարմարություն («ամենայն ընտրություն»): Հայ գրերին այդ հատկությունը տալու համար Մաշտոցը նույն այդ քաղաքում զիմում է հույն զրիչ Հոռիանոսին: Սա է, որ զոտիս է բերում և ստեղծում ամենամանր, կարեւ ու երկար, առանձին և կրկնակ կամ կրկնահար (տօնչողո) տառերը («զնիբագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ»): Այսպիսով, —շարունակում է Զավախիշվիլին, —Կորյունը գործն այնպես է պատկերացնում, որ իբր թե հայկական այբուբենի գծագրությունը և բոլոր տառատեսակները՝ մեծատառն ու փօքրատառը, առանձին ու կրկնակ, այսինքն փակազիք զբությունները հենց սկզբից և այն էլ Մաշտոցի ժամանակ են մշակված եղել: Բայց էպիգրաֆիկան և հնագրությունը ամենուրեք ուսումնասիրել են, որ տարբեր տառատեսակները ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, պատմական զարգացման շնորհիվ են առաջ գալիս ժամանակի ընթացքում: Պարզ է, որ այսպիսի բան ոչ ժամանակակից և ոչ էլ առավել ևս մասնակից մարզը չէր կարող ասել: Այս հանգամանքը վկայում է, —եղանակացնում է Զավախիշվիլին, —որ այդ պատմողը ապրել է այնպիսի ժամանակ, երբ հայ զբությունը արդեն զարգացած է եղել, և բացի մեծատառերից փաքրատառերը և նույնիսկ փակազերեն ել են եղել զրծածության մեջ»:²

Այս հետազոտողը, որ հնագիրության մեծ մասնագետ է, ինչպես տեսնում ենք, միանգամայն յուրովի է հասկանում Կո-
րյունի կտրն և երկայն, առանձին և կրկնակ տերմինները (իբրև
մեծատառ ու փոքրատառ կամ երկաթագիր ու բոլորագիր և իբ-
րև առանձնագիր ու փակագիր) և իրավամբ ժխտելով այդօրինակ
իրողության կարելիությունը այն ժամանակի համար՝ անսպա-

¹. ივ. ჯავახიშვილი — ქელი სომხური საისტორიო ლიტერატურის ისტორია, I, თბილისი, 1938 წ.

² Հնդկական գույքի շահագործությունն են:

սելիորեն հերքում է նաև Կորյունի՝ Մաշտոցին ժումանակա կից և մասնակից լինելու հասրավորությունը, ըստ որում Կորյունին համարում է ոչ ժամանակակից հեղինակ, որը հնարել է այդ պատմությունը Մեսրոպի մասին։ Անա թե ուր կարող է հասնել նույնիսկ չափազանց լուրջ գիտնականը, երբ պատմական երկի տերմինները կտրում է ժամանակից և նրանց մեջ դնում հետագա ժամանակների իմաստներ:

4. Կորյունի հիշյալ տերմիններին մոտավորապես նույնիմաստներն է տալիս նաև կարո Ղաֆաղարյանը յուր հետաքըրքական աշխատության մեջ։¹ Ըստ Ղաֆաղարյանի, Կորյունի այդ բառերը վկայում են, որ Մաշտոցը հնարել է «զրի մի առանձին տեսակ՝ վիմագրերի համար, մի հատուկ ոճ՝ ձեռագրերի համար և մի յուրահատուկ տեսակ զրչության ոճ՝ առօրյա պետքերի համար... Երբագույնը, կարծում ենք, նոտրգիրն է, որովհետեւ երկաթագրի և ոչ՝ մի տեսակը չի կարող հարմարվել այդ անվանը, մանավանդ որ նոտրգիրը... գրի ամենանուրը տեսակն է։ Կարնը, կարծում ենք, ուղղակի երկաթագրերն է... Երկայնը՝ ըստ լորածե երկաթագիրն է... Առանձին բառը պարզորոշ կերպով նշանակում է առանձին զրվող տառանիշ, ինչպես արդեն վաղուց կասհումներ եղել են այդ մասին, իսկ տռանձին բարին հակառըրգող կրկնավորը պետք է նշանակի այնպիսի տառանշան, որը պարունակում է երկու կամ ավելի տառանշանի պատկեր և գաղափար, որ, պարզ ասած, պետք է նշանակի փակագիր։ (էջը 44, 45):

Այսպիսով ուրիմն, ըստ այս հետազոտողի ևս, Մաշտոցը Հռովիանոսի օգնությամբ լուծել է հայերենի տառատեսակների (շրիփտի) հարցը (նոտրգիր, երկաթագրիր, բոլորագիր, փակագիր)։ Ղաֆաղարյանը լայնագույն տերմինի մասին ոչինչ չի ասում, որովհետև օգտվել է միայն Վենետիկի հրատարակությունից (1894 թ.), որտեղ այդ բառը բացակայում է։

Ղաֆաղարյանը Զավախիշվիլուց տարբերվում է նրանով, որ ընդունում է տարբեր տառատեսակների և նույնիսկ փակագրերի գոյությունը զրչության հնագույն նմուշներում և հետեւ վարար կասկածի տակ չի առնում Կորյունի ասածները և նրա վավերականությունը։ Մակայն Ղաֆաղարյանի պնդումը մնում է չապացուցված և անապացուցելի, քանի որ, ինչպես իրավամբ

¹ Կ. Ղաֆաղարյան—Հայոց գրերի տեսակները. Երևան, 1939 թ.

պնդում է Զավախիշվիլին, Մեսրոպի ժամանակ, այսինքն գրի սկզբնավորության շրջանում տարրեր տառատեսակներ չէին կարող լինել Ղաֆադարյանը զրում է. «Երբ ձևնամուլի եղանք այդ հարցի քննությանը, տեսանք, որ, այն, գրչության ենազույն նմուշներն անգամ պարունակում են փակադիր նշաններ» (էջ 44). Միթե պարզ չէ, որ իր ասածը ապացուցելու համար հեղինակը պետք է բերեր գրչության այնպիսի նմուշ, որը Մեսրոպի ժամանակի հնությունն ունենալը, իսկ այդ հնարավորությունից նա ինարկե գուրկ է, որովհետեւ այն ժամանակվագրչությունն չի գտնված: Ղաֆադարյանի գլուխ «Վեհական արձանագրությունների փակագրերի ժամանակագրական տախտակ» հետաքրքրական, հավելվածը, որը պիտի ապացուցեր նրա պնդումը, առիթ է տալիս ճիշտ հակառակն ասելու: Այդ «Ժախտակը» ցույց է տալիս, որ փակագրեր զործածվել են միայն 7-րդ դարից հետո, այն էլ շատ սահմանափակ քանակով, ընդամենը 9 հատ, մինչդեռ նույն «Ժախտակում» փակագրերի թիվը 235 է: Հենց այս ցույց է տալիս, որ 7-րդ դարում փակագրերը նորություն են եղել և հետագագարերում են լայն ծավալում ստացել:

Սակայն այս ի միջի այլոց: Անցնենք մեր բազմատանջ տերմինների մի այլ մեկնարանության:

5. Մեզ զբաղեցնող հատվածի ամենավերջին մեկնությունը տվել է Մ: Աբեղյանը իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկզբը»¹ հողվածի մեջ: Ահա թե ինչ է զրում այնտեղ գիտնականը.

«Նա (Մեսրոպը—Դ: Ա.) Հոռիանոսի ձեռքով հարդարում է իր արգեն գտած տառերի գեղագրությունը» (էջ 43): «Մաշտոցը այն հույն գրագրի օգնությամբ վերջնապես հորինել է «նրագույնն ու լայնագույնը», նշանագրերի նուրբ ու լայն, բարակ ու հաստ մասերը, կողմերը, այսինքն թե տառերի որ կողմերը, որ ժամաները հաստ կամ բարակ պիտի լինեին, որպեսզի և՛ գեղեցիկ և՛ հարմար լինեին գրելու» (էջ 45): Ապա՝

«Կորյունի գրածը, թե Մաշտոցը Հույն գրագրի ձեռով հորինել է կարմն ու երկայնը, կարիլի չէ հասկանալ՝ կարճ ու երկայն նշանագրեր... Հույն գրտգիրն այն խորհուրդը միայն կա-

¹ Տես «Մոլետական գրականություն» ամսագրի 1941 թվի № 2, էջը 43, 45—46:

բող էր տալ, թե առանձին նշանագրերի կարն ու երկայն մասերը գեղագրական տեսակետով ինչպես պիտի դասավորվեն տառի բուն մասի վերաբերժամբ, կարճ մասը երկայն մասի աջ, թե ձախ կողմում, վերևում, թե ներքեւում (ն. տ.): Ապա՝

«Մաշտոցը Հույն գրագրի օգնությամբ հորինել, վերջացրել է «պառանձինն և զկրկնաւորն (վար. «զկրկնայարն»)... ի՞նչ է արտահայտված այդ «առանձին» և «կրկնաւոր» կամ «կրկնայար» բառերով:—Շնոր պարզ բան: Մեսրոպյան նշանագրության բոլոր 36 տառերն էլ առանձին են, այսինքն ջոկ, մենակ, զատզատ են, իրենց հատուկ մեկ առանձին հնչյունով, մեկ տառ մեկ հնչյունի արտահայտություն կամ մեկ առանձին հնչյուն մեկ առանձին տառով արտահայտված: Բայց կա նաև ՈՒ հնչյունը, որ չունի իր առանձին նշանագիրը. դա արտահայտված է երկու տառի միացումով: Դա, այդ կրկնաւորը «կրկնաւոր» է, կամ «կրկնայար» (ինչպես կա իբրև վարիանտ), այսինքն՝ երկու տառի «յարում», կցում, միացում» (ն. տ. էջը 45—46. ընդոգնությունների մեջ ազատ եմ վարվել—Դ. Ս.):

Այսպիսով, Մ. Արեգյանը հիմնականում կրկնելով Իս. Հարությունյանի մեկնությունը՝ Հոռփանոսին հատկացնում է հույնական գեղագրական աշխատանք, այն տարբերությամբ, որ մանրամասնում է իր հիմնավորումը և առանձին-առանձին պարզաբանություն տալիս կորյունի գործածած տերմիններին: Սակայն Իս. Հարությունյանի և Մ. Արեգյանի մեկնությունների մեջ կա մի ուրիշ տարբերություն էլ, որ չի կարելի անտեսանել, քանի որ մեծ կարևորություն ունի Մեսրոպի հնեղինակային իրավունքը՝ որոշելու համար, եթե կարելի է այս արտահայտությունը գործածել տվյալ գեպքում: Խնդիրը այն է, որ Հարությունյանի ասածով՝ Հոռփանոսը որոշել, սահմանել է Մեսրոպի հորինած տառերի հաստությունն ու երկարությունը, այսինքն տվյալ է միայն գեղագրական, տեխնիկական կոնսուլտացիա: Արեգյանի ասածով՝ գուրս է գալիս, որ Հոռփանոսը վերահորինել է Մեսրոպի ներկայացրած տառերը, որոշելով, օրինակ, թե նշանագրերի գալիս ու երկայն մասերը ինչպես պիտի դասավրվեն տառի բուն մասի վերաբերմամբ, կարն մասը երկայն մասի աջ, թե ձախ կողմում, վերևում, թե ներքեւում: Սա արգեն կոնսուլտացիա չէ, այլ հեղինակություն կամ առնվազն հեղինակակցություն, որովհետեւ ինչ է նշանակում որոշել, թե տառի կարճ մասերը երկար մասերի աջ, թե ձախ կողմում, վե-

րենում, թե ներքենում են լինելու, եթե ոչ՝ տառերի հորինում։ Օրինակ Ա-ն տարբերվում է Մ-ից հանց նրանով, որ մեկի կարձ մասը ներքենում է, իսկ մյուսինը՝ վերենում, Լ-ն տարբերվում է Ի-ից նրանով, որ մեկի կարձ մասը ներքենում է, մյուսինը՝ վերենում (մեջտեղում), Ղ-ն տարբերվում է Հ-ից նրանով, որ մեկի կարձ մասը վերենում ձախից է, իսկ մյուսինը՝ վերենում աջից, Բ-ն տարբերվում է Ի-ից նրանով, որ մեկի կարձ մասը վերենում է, մյուսինը՝ ներքենում (մեջտեղում) և այլն։ Արդ, պարզ է, որ Հոռփանոսին այսպիսի աշխատանք ու այսպիսի գեր վերագրել Մեսրոպյան տառերի հորինածն գործում՝ նշանակում է առնվազն կիսել Մեսրոպի «հեղինակային իրավունքը» նույն տառերի նկատմամբ, որ անշուշտ Արեգյանը չէր անի, մանաւանդ որ նույն այդ հոգվածի մեջ ինքը միանգամայն իրավացի կերպով գրում է, թե Սամոսատ գալուց և Հոռփանոսին զիմելուց առաջ «Մաշտոցը հորինել է կարդալ սովորեցնելու դասագիրք։ Նա հայոց լեզվի առաջին ուսուցիչն էր և բնականարար նա էլ առաջինը պիտի հորիներ առաջին այբբենարանը՝ իր նշանագրերը «կապելով» կարգալու, կամ «գիրկապ» կարդալու համար» (էջ 41):

Եթե մինչև Սամոսատ գնալը և Հոռփանոսին հանգիպելը Մեսրոպը եղեսիայում արդեն կադմել էր «կարդալ սովորեցնելու դասագիրքը», «առաջին այբբենարանը», ինչպես մեկնում է Արեգյանը Կորյունի «յօրինէր սիղորայեւք և կապօք» արտահայտությունը, — ապա նա չէր կարող զրանից հետո միայն, և այն էլ օտարի օգնությամբ, նոր որոշել, թե իր տառերի կարձ մասերը երկար մասերի աջ, թե ձախ կողմում, վերենում, թե ներքենում պիտի լինեն Պարզ է, որ Մ. Արեգյանին այսպիսի անհավանական հետևության հասցնողը եղել է այն, որ նա ցանկացել է Կորյունի նըրագույն, լայնագույն, կարճ, երկայն տերմիններին տալ այնպիսի իմաստ, որ հնարավոր լինի Հոռփանոսի աշխատանքին գեղագրական կոնսուլտացիայի բնույթ տալ, բայց անգուշտությամբ հանգել է այն բանին, որ Հոռփանոսին ակամագարձրի հեղինակակից։

Ինչ գերարերվում է Կորյունի առանձին և կրկնավոր (կամ կրկնահար) տերմինների այն մեկնությանը, որ տալիս է Մ. Արեգյանը, ապա այստեղ հարգելի գիտնականը սիանգամայն անորոշ բան է ասում, թեև հենց այս հարցի մասին, զրում է, թե «շատ պարզ բան» է։ Անորոշությունը բխում է նրանից, որ

Մ. Արեղյանը առանձին ասելով հասկանում է բոլոր 36 տառերը, որ հնարել էր Մեսրոպը, իսկ կրկնավոր կամ կրկնահար ասելով ուզում է հասկանալ ՈՒ-ն, որ ինչպես հայտնի է, երկու տառի զուգակցում է, ինչպես հունարենում, այնպես էլ հայերենում, և ոչ տառ է, ոչ էլ տեղ ունի այրութենի մեջ: Ուրեմն ինչ է արել Հոռփանոսը Ու-ի նկատմամբ այն բանից հետո, երբ արդեն գծագրել է բոլոր 36 տառերը, ուրեմն և ՈՒ-ի բաղադրիչները՝ ՈՒ-ն և Խ-նը: Պարզ է, որ բաղադրիչները գծագրելուց հետո նրանց որեէ հարագրություն կամ կապակցություն գծագրելը մի այնպիսի երեելի բան չէր, որ Կորյունը հատկապես նշեր նաև այդ աշխատանքը, մանավանդ որ, ինչպես հետո կտեսնենք, Կորյունի և նրա ժամանակակիցների ու հետեօրդների համար ՈՒ-ն նշանագիր կամ տառ չէր, այլ՝ «երկրաբրառ», ինչպես և աւ, եւ աի, ոի և այլն: Հետեաբար Հոռփանոսը կամ պիտի բոլոր (այն ժամանակվա գիտակցությամբ) երկրաբրառների մասին խորհութեաներ տար Մեսրոպին և գծագրեր նրանք՝ դուրս գալով գեղղագրական կրնառութանտի սահմաններից, կամ միայն ՈՒ-ի մասին երկու տառով գրելու խորհութ տար, իսկ այդ կնշանակի, որ Մեսրոպը ՈՒ-ն չուներ կամ երկու տառով չէր արտահայտել մինչև Հոռփանոսին հանդիպելը և նրա խորհրդին հետեւով ընդունից այդ, այս դեպքում ևս Հոռփանոսը ավելին պիտի արած լինի, քան պահանջվում է զեղագրողից, գծագրողից, որպիսի դեր են ուզում հատկացնել նրան իս. Հարությունյանը և Մ. Արեղյանը: Այսպիսով ակնհայտ է, որ Արեղյանի «շատ պարզ բան» հայտարարությունը բոլորովին էլ պարզ չէ, և կրկնավոր կամ կրկնահար տերմինը նույնքան կարու է գիտական ճշգրտան, որքան և կարծ ու երկայն և նրբագույն ու լայնագույն տերմինները:

Վերոհիշյալ տերմինները և Կորյունի մեզ հետաքրքրող հատվածը, բացի մատնանշված հետազողներից, ուշադրության են առել և շատ ուրիշ գիտնականներ, բայց իմ նպատակից գուրս համարելով նրանց քննադատությունը առանձին-առանձին, մանավանդ որ նրանց մոտ կրկնվում են արդեն վերը քննարկված տեսակնամները տարբեր վարիանտներով՝ ես այնուամենայնիվ անհրաժեշտ եմ համարում տալ հիշատակված և չհիշատակված ուսումնառիրողների կարծիքների համագրական տախտակը ժամանակագրական կարգով:

Համատղրական տախոսակ կորուսի գործուստ երթիքների մեկնաբանություններ

Աղքահուշն	Տարին	Վելայն զույն	Հնը բարձր զույն	Հերկային	Հերկային	Հառանձնաց	Հառանձնաց	Հառանձնաց	Հառանձնաց
Զարբինակալուն	1886	Հունիսի	Հնը բարձր զույն	Հայալուն	Հայալուն	Հայալուն	Հայալուն	Հայալուն	Հայալուն
Հայությունակալուն	1892	Հունիսի	Մասների հաս- տությունը	Մասների հաս- տությունը	Հրկաբությունը	[Հի քննում]	[Հի քննում]	[Հի քննում]	[Հի քննում]
* Տաղակարգյան	1895	Հունիսի	Ի և հայություն	Հնունասիսակ հնչուսաց ու- դիպութիւն, թագավոր՝ Հայությունը	Ի և հայություն				
Տաղակարգյան	1897	Հունիսի	Հնունը զիր	Հնունը զիր	Հրկաբությունը	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն
Մարդկույան	1913	Հունիսի	[Հի քննում]	[Հի քննում]	Հրկաբությունը	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն
Հարկավույն	1938	Հունիսի	Հնունը կամ Հնունը առանձին	Հնունը կամ Հնունը առանձին	Հի քննում	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն
Դաֆնիաբյան	1939	Հունիսի	Հնունը կամ Հնունը առանձին	(ուղարքական կամ առանձին)	Հի քննում	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն	Ի և հայություն
Արքույնաբյան	1941	Հաւասար	Մասների բարձր զույն	Մասների բարձր զույն	Ի և հայություն				
Միկալել	1943	Հաւասար	Հնչուսաց հնչուսաց	Հնչուսաց հնչուսաց	Ի և հայություն				

* Տաղակարգյան

Եթե ամփոփենք այս համալրական տախտակի տվյալները, կտեսնենք, որ մեզ զբաղեցնող հարցին տարբեր հեղինակներ և հեղինակների խմբեր տալիս են հետեւյալ պատասխանները.

1. Հռոփանոսի գերը բոլորն առանց բացառության համարում են գեղագրական, նկարչական, գծագրական, ըստ որում մի քանիսը հույն գրչին վերագրում են նաև հորինական-հեղինակային աշխատանք. այդ թվում Տաղավարյանը, Զավախիշվիլին և Ղաֆաղարյանը Հռոփանոսի հետ են կապում մեր տառերի տեսակները (երկաթագիր, բոլորագիր կամ մեծատառ, փոքրատառ և փակագիր) հորինելու աշխատանքը, իսկ Արեղյանը Հռոփանոսին է վերագրում Մհերոպի հնթագրած կամ նախագծած տառերին ձևու կերպարանք տալը և ո՛հ կրկնատառի հորինումը:

2. Կորյունի գործածած նրբագույն, լայնագույն, կարճ, երկայն, առանձին և կրկնակ տերմիններից մեկը՝ լայնագույնը չեն քննում բոլորը, բացի Մ. Արեղյանից. մնացած տերմիններից առանձինը և կրկնակը չեն քննում Հարությունյանը, նրբագույնը չեն քննում Մարկվարտը,

3. Կորյունի գործածած տերմինները իբրև գիտական տերմին չեն ճանաչում և առանց հաշվի պանելու այն ժամանակվաքերականագիտության հասկացությունները՝ պայմանական, կամայական, ինքնաստեղծ իմաստ են դնում այդ բառերի մեջ բոլորը, բացի Մարգիսյանից ու Մարկվարտից:

Այսպիս, Հարությունյանը բոլորովին չեն փորձում կոնկրետացնել ու մասնավորել այդ տերմիններից և ոչ մեկի իմաստը. տառերի տարբեր տիսակներ կամ շրիփտներ են հասկանում Տաղավարյանը, Զավախիշվիլին, Ղաֆաղարյանը նրբագույն, կարճ ու երկայն տերմինների տակ, և առանձնագիր տառեր ու փակագրեր՝ առանձին ու կրկնակ տերմինների տակ. ի տարբերություն դրանց, Արեղյանը կրկնակ տառը մեկնում է իբրև ՈՒերկտառի անուն, իսկ նրբագույն, լայնագույն, կարճ ու երկայն տերմինները ուղղում է մեկնել իբրև տառերի համապատասխան մասերը ակնարկող բառեր. առանձին և կրկնակ բառերով Տաղավարյանը հասկանում է ը || ո հ ւ || զ տառերը, իսկ Մարկվարտը՝ ը || ո, ւ || զ և լ || զ տառերը, և այլն:

4. Մեզ զբաղեցնող տերմիններին կամայական մեկնություն տալուց հրաժարվել են միայն Մարգիսյանը և մասամբ Մարկվարտը, որոնք այս կամ այն չափով հենվում են հին քերականության տվյալների վրա, ըստ որում Մարգիսյանը իր քըն-Ալիասություններ—11

նած բոլոր տերմիններն է զիտում իբրև քերականական տերմիններ, թեև մի փոքը սխալ է կատարում՝ նուրբերի մեջ առնելով նաև միջակները, որոնք հին քերականությամբ առանձին խումբ էին կազմում, այնինչ Մարկվարտը հին քերականությամբ լուսաբանում է միայն կարի եւ երկայն տերմինները, իբրև կարճ ու երկար ձայնավորների անուններ:

Այսպիսով, մինչգետ Մարգիսյանը պատմական-քերականական մոտեցում է զրսեորում Կորյունի բոլոր տերմիններին, իսկ Մարկվարտը՝ միայն երկուսին, մասցած բոլորը պայմանական ու կամայական իմաստավորում են տալիս նույն տերմիններին:

5. Թե՛ պայմանական-կամայական և թե՛ պատմական-քերականական իմաստավորում զրսեորող բոլոր բանասերներին այնուամենայնիվ միացնում է մեկ ընդհանուր գիծ. այդ այն է, որ նրանք, անկախ այն բանից, ճիշտ են հասկանում այն հնչյունները, որ ակնարկել է Կորյունը այդ տերմիններով, թե՛ ոչ, վերջին հաշվով Հռովիանոսի աշխատանքը կապում են իրենց ենթադրած հնչյունների տառերի, գրերի հետ, նրանց պատկերի, կերպարանքի, գծագրության հետ և այդ պատճառով էլ Հռովիանոսին վերագրում են գեղագրի, գծագրողի, նկարչի աշխատանք: Բոլոր բանասերներն էլ այս հարցում կատարում են ճիշտ միենույն ճակատագրական սխալը, որով և կանխորշիվում է Կորյունի համապատասխան հատվածի սխալ ըմբռնումն ու մեկնությունը. դրա հիմնական պատճառը, ինչպես արդեն ասել եմ, մեթոդաբանական այն էական արատն է, որ ընդհանուր է մեր հիշատակած բանասերների համար. նրանք ցանկանում են պատմական տեքստը մեկնել առանց հաշվի առնելու պատմական պայմանները, պատմական հասկացությունները, բառերի պատմական իմաստները և ելնում են իրենց ենթադրություններից ու կուահումներից:

Այն հատվածը, որ անտեղի կերպով այսքան տարածայնությունների տեղիք է տվել իմ կարծիքով ոչ այնքան բարդ է, ոչ էլ այնքան տարտած, որքան Կորյունի ընագրի բազմաթիվ այլ տեղեր, որ հարցը լուծելը այսքան դժվարանար: Հարցի լուծումը հեշտացնելու համար անհրաժեշտ է նախ՝ հրաժարվել ամեն տեսակի կանխակալ ու կամայական կարծիքներից և երկրորդ՝ հաշվի առնել, թե ինչ իմաստ ունեին Կորյունի գործածած բառերը Կորյունի ժամանակ և նրան մոտիկ ժամանակներում:

Այդ ժամանակներից, բարեբախտաբար, մեզ մնացել է քերականագիտական հարուստ ժառանգություն ի դեմս Դիոնիսիո-

սի քերականության հնագույն թարգմանության և նրա հայ մեկնաբանությունների, որպիսիք հաշվի չառնելը մեծ թերացում է տվյալ դեպքում:

Ընդունելով, որ մեկնությունները պիտի հաջորդեին բուն քերականության թարգմանությանը, իսկ վերջինս պետք է կատարվեր անշուշտ տառերի գյուտից հետո՝ այնուամենայնիվ չպետք է մոռանանք, որ հունական կրթություն ունեցող, տարիներ շարունակ պալատում և կաթողիկոսի մոտ իրեւ գըագիր, թարգման ու քարտուղար ծառայելով, Մեսրոպը ծանոթ էր «արտաքին զիտություններին» ու նախ և առաջ քերականական արվեստին, թեև կուզ հունարեն բնագրով: Նա զիտեր, որ քերականության մեջ տառերը որոշ սիստեմի են վերածված, որոշ խըմբերի դասակարգված, նա զիտեր, որ տառերից ոմանք կտրն են, ոմանք՝ երկար, ոմանք եռարք են, ոմանք՝ քավ կամ խած, ոմանք պարզ են, ոմանք՝ բարդ և այլն. Նա զիտեր, այնուհետեւ, որ պետք է սահմանվեր որոշ համապատասխանություն իր հորինած հայերեն տառերի և հունարենի տառերի միջև, որպեսզի հնարավոր լիներ «անսայթաքորեն հայերենի վերածել» փոխառյալ բառերն ու անունները. Նա զիտեր, վերջապես, որ ինքը հորինել է 36 տառ, մինչդեռ հունարենն ունի միայն 22 տառ, ուստի անհրաժեշտ էր զիտականորեն որոշել, թե հայերենի այդ ավել տառերը տառերի քերականական որ դասերին պետք է վերագրել և այլն: Մի խոսքով, նա զիտեր, որ իր հորինած տառերին անհրաժեշտ էր «զիտական մկրտություն»: Իմ կարծիքով, հենց այս հարցերը լուծելու համար է, որ Մեսրոպը Եղեսիայում գրերը հորինելուց, «գրերն ի վանկ կապելու կամ գիր-կտպ կարդալու համար դասագիրք-այբբենարան» հորինելուց հետո, ինչպես հաստատում է Արեգյանը, գնում է Սամոսատ քաղաքը և դիմում «Հելլենական դպրության գրիչ» Հռովիանոսի օգնությանը: Արդ, եթե ընդունենք, որ Մեսրոպը իսկապես մինչև Հռովիանոսին հանդիպելը արդեն ոչ միայն հորինել ու անվանել էր բոլոր տառերը, այլև դասագիրք-այբբենարան կազմել, ինչպես ճիշտ կերպով ապացուցում է Արեգյանը, ապա միանգամայն անհիմն պիտի համարենք այն ենթադրությունը, թե նա Հռովիանոսին դիմել է տառերը գծագրելու կամ նկարելու, մանավանդ նրանց ձեւ ու կերպարանք տալու նպատակով:

Բայց նախ պարզենք, թե ինչիք մասնագետ էր Հռովիանոսը կորյունը նրան անվանում է «գրիչ» ոմն հելլենական դպրության

(տես Կորյուն, էջ 48), հելլենական, այսինքն հունական դպրության գրիչ: Այստեղ եղած բառերից դպրության գրիչ բառերը ոչ թե գրագրի կամ գեղագրի իմաստ են ակնարկում, այլ քերականի, գրականագետի, գիտունի: Հենց նույն Կորյունը նախօրդ էջում հայտնում է, որ Մեսրոպը իր աշակերտների մի մասը կարգեց ասորական դպրության, մյուս մասը՝ հունական դպրության: Պարզ է, որ նրանք պետք է սովորեին ոչ թե ասորական կամ հունական գեղագրություն կամ գրագրություն, այլ համապատասխան լեզուներն ու գրականությունները: Ավելին. դպրություն բառը, ինչպես և դպիր, գրաբարում նշանակում էին քերականություն, գրականություն, գրող, քերական (տ. ՆՀԲ «Գրող», «Գպիր», «Գպրություն» և այլ բառերի տակ): Ինչպես Աղոնցն է ապացուցում, մինչև հունաբան դպրոցի ստեղծումը հայերը հունարեն գրամմատիկե (= քերականություն) թարգմանում էին դպրություն բառով (տ. ԴИОН. Փրակ. և արմ. ՏՕԼԿ. էջ LXXII): Գրիչ բառն էլ բառ նշԲ, նշանակում էր քերական, գրող և այնու Պարզ է այսպիսով, որ Հռովանոսին Կորյունը նկատի ուներ ոչ թե որպես գեղագրի, կամ գրագրի, այլ որպես հունական դպրության, այն է՝ քերականության գիտունի, մասնագետի: Հետեւաբար այս հատվածը պետք է թարգմանել այսպես.

«Եվ այնտեղ, նույն քաղաքում գտավ հունական դպրության քերականի, Հռովանոս անունով....»:

Սրա շարունակությունը հենց այն հատվածն է, որ պարունակում է մեզ զբաղեցնող տերմինները, և որի միջոցով պետք է պարզվի Հռովանոսի գերը: Ահա այդ հատվածը. «որով (Հռովանոսիւ—Գ. Ջ.) զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնըրաբագոյնն (և զլայնագոյնն), զկարձն և զերկայնն, զուանձինն և զգրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ...» (տ. Կորյուն, էջք 48—50): Աբեղյանը այս հատվածը թարգմանել է հետեւյալ ձևով. «որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո...» (Ն. Տ. էջք 49—51): Այս թարգմանությունը, և մանավանդ այն մեկնությունը, որ տալիս է Աբեղյանը այս հատվածին, իմ կարծիքով խիստ կամայական է և չի համապատասխանում Կորյունի ասածին: Նախ չգիտես ինչու, թարգմանության մեջ բնագրի «որով» (Հռովանոսով, Հռովանոսի, միջոցով)

դարձրել է «որի ձեռով», որով ընդգծել է, որ այդ աշխատանքը ձեռին, այսինքն՝ տեխնիկական-գծագրական աշխատանք է եղել. ապա՝ բնագրի «զամենայն ընտրութիւնս նշանագրացն... յօրինեաց» թարգմանել է «նշանագրերի բոլոր զանազանությունները... հորինեց», որով ուզում է ասել, թե Հռոփանոսի ձեռքով են հորինվել մեսրոպյան տառերի բոլոր զանազանությունները, այսինքն տառերի հաստ ու բարակ, երկար ու կարճ մասերի գառավորությունները, վերելց, թե ներքեցից, աջմց, թե ձախից և այլն, որ նշանակում է, թե Հռոփանոսի ձեռքով ոչ թէ գեղագրվել, գծագրվել են մեր տառերը, այլ ուղղակի հորինվել, ստեղծվել. Ես գտնում եմ, որ Կորյունի հորինել բառը չի կարելի այս գեղգում թարգմանել նույն հորինել բառով. Այդ բառը գրաբարում ունի տասից ավելի իմաստ, որոնց մեջ ի միջի այլոց՝ հետևյալ իմաստները. հարդարել, հարմարեցնել, կարգավորել, տնօրինել, կարգել, հարադրել, շարագրել (տես ՆՀԲ), որոնք աշխարհաբար հորինել բառի իմաստների մեջ չկան, մինչդեռ հենց սրանց մեջ պետք է որոնել այն բառը, որ կտա Կորյունի հորինել բառի իմաստի համարժեքը աշխարհաբարում. Եվ վերջապես, առաջին իսկ հայացքից պարզ երևում է, որ անտրամարանական ու տարտամ է «զամազանությունները հորինել» արտահայտությունը, որովհետև «նորինել» աշխարհաբար նշանակում է ստեղծել կամ հնարել, բայց ինչչես կարելի է արդեն ստեղծված տառերի զանազանություններ ստեղծել կամ հորինել. միանգամայն պարզ է, որ գոյություն ունեցող, եղած, արդեն ստեղծված բաների զանազանությունները կարելի է միայն կարգել, շարադրել սահմանել, որպես և հենց այդ բանն է, որ արվել է Հռոփանոսի, իրրե գիտնականի, օգնությամբ. Այստեղից բխում է, որ տվյալ հատվածի այն թարգմանությունը, որ կատարել է Արեգյանը, կարիք ունի վերանայման. Մի հանգամանք սակայն մեզ խանգարում է տվյալ հատվածի մեր թարգմանության առաջարկությունն անսիջապես տալ Խնդիրն այն է, որ հատվածի շարունակությունը բնագրի մեջ էլ խառնակ է և թյուրիմացության ահղիք է տալիս. Ահա բնագիրը.

«.... Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցացնէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբանս հանճարոյ», Որ և զբեցաւ ձեռամբն այնորիկ

գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրուքեան» (Կորյուն, էջ 50):

Բնագրի անհարթությունը նկատել է Արեղյանը, ուստի և վերջակետից հետո եկող նախադասությունը (որ ես ընդգծել եմ) բաժանել է երկու նախադասության, գրանցից մեկը միացընել նախորդին, իբրև լրացում, իսկ մյուսը գրանցից անջատել միշտովի և տվել իբրև անկախ նախադասություն։ Ահա Արեղյանի թարգմանությունը.

«Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զրանս հանճարոյ», որ և գրվեց այն գրագրի ձեռավ. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ [պատրատելով] նույն դպրության համար» (Կորյուն, էջ 51): Այս հատվածը Արեղյանը մեկնում է հետևյալ ձևով. «Այդ թարգմանությունը գրվել է նույն հույն գրագրի ձեռով, միաժամանակ և մանուկներին սովորեցրել են (Ժվ—Դ. Ս.) հայերեն գրել և պատրաստել են նրանց հայերենի համար գրագիրներ»¹:

Ճիշտ են արդյոք այս թարգմանությունը և այս մեկնությունը, իմ կարծիքով՝ նշ. Դրանք բխում են այն անհիմն հնաթագրությունից, որ Հռովհանոսը իբրև թե գրագիր կամ տառանկարիչ էր. Բայց հենց այստեղ էլ ծագում է մի հակասություն, որ չի նկատել թարգմանիչն ու մեկնողը. մի հույն գրագիր կամ տառանկարիչ անցուշտ կկարողանար Մեսրոպին օգնել տառերը գեղեցիկ գծագրելու կամ նույնիսկ տառերին կերպարանք տալու գործում, բայց ինչպես կարող էր նրա ձեռքով գրվել Սողոմոնի առակների թարգմանությունը, որ կատարել էր Մեսրոպը իր աշակերտների հետ, և մանավանդ ինչպես կարող էր օտարազգի մարդը և օտար լեզվի գրագիրը Մեսրոպի աշակերտներին սովորեցնել «հայերեն գրել և պատրաստել նրանց հայերենի համար գրագիրներ», ինչպես տալիս է մեկնությունը. չէ՞ որ հայերեն գրելու և հայերենի համար գրագիր լինելու համար անհրաժեշտ էր նախ հայերեն իմանալ, իսկ հույն Հռովհանոսը այստեղ մաղաշափ անգամ պիտանի լինել չէր կարող Այստեղից բխում է, որ տվյալ մեկնությունից ու տվյալ թարգմանությունից պետք

¹ Մ. Արելյան—Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականություն Ակրաքը «Սովորական Գրականություն» ամսագիր, 1941 թիվ № 2, էջ 46.

է հրաժարվենք և դառնանք կորյունի ասածի բնագրային ճշտմանը, քանի որ, ինչպես ասացինք, այնտեղ կա խառնակություն, որը թյուրիմացության տեղիք է տալիս: Նախ և առաջ պետք է ընդունենք, որ վերջակետից հետո եկող նախադասությունը, ինչպես ճիշտ վարվել է Արեղյանը, ովտեր բաժանվի երկու նախադասության և մեկը միացվի նախորդին, իսկ մյուսը՝ զիտվի իրեւ անկախ նախադասություն: Բայց դժվարությունն այն է, որ բաժանումը կորյունի տպագրյալ բնագրի հիման վրա և այնպիս կատարելը, ինչպես այդ արել է Արեղյանը, թյուրիմացության նոր տեղիք է տալիս: Ուստի անհրաժեշտ է զիմել ձեռագրական տարբերություններին: Այստեղ պարզվում է, որ բնագրի մեջ հետաքրքրող մասը ծա և ծռ ձեռագրերի մեջ ունի տարրեր խմբագրություն: այսպես, մինչդեռ բոլոր ձեռագրերը տալիս են «Որ և զրեցաւ ձեռամբն այնորիկ զրչի: հանգերձ ուսուցանելով....» վերոհիշյալ երկու ձեռագրերը ունեն «զրեցաւ իսկ ձեռամբն գրչին այնորիկ հանդերձ ուսուցանելով....»: Արդ, մըն է այս երկու ընթերցումներից ավելի վավերական: Կարծում եմ, որ ծա և ծռ ձեռագրերինը, քանի որ նախ՝ այնտեղ երկում է ավելի հնատիպ շարադասություն (ձեռամբն զրչին այնորիկ), քան յուսներինը («ձեռամբն այնորիկ զրչի»), երկրորդ՝ կորյունի բոլոր հայտնի ձեռագրերի մեջ ամենահներից են հենց այդ ձեռագրերը, որոնք ունեն 14-րդ և 14—15-րդ դարերի գրչության նշաններ, ըստ Արեղյանի (տ. Կորյուն, էջ 21), մինչդեռ մյուսները կամ անթվական են և կամ 1672 թ., 1774 թ., 1781 թ. և նույնի 1828 թվի: Այսպիսով, հայտնի բոլոր 8 ձեռագրերից 4-ը շատ ավելի նոր են, քան ծա և ծռ ձեռագրերը, իսկ մյուս երկուսն էլ՝ անթվական: Հետեւաբար զրչության և ոճի ու շարադասական համեմատական հնություն ունեցող այս ձեռագրերի վրա միանդամայն իրավունք ունենք հենվելու: Միաժամանակ նկատի ունենալով, որ կորյունի ժամանակ ոչ մեծատառ ու փոքրատառ կար և ոչ էլ նախադասությունները բաժանելու նշաններ էին գործածվում, և ելնելով նրանից, որ անհրաժեշտ է վերջակետից հետո եկող նախադասությունը երկուսի բաժանել, ինչպես և արել է Արեղյանը՝ գտնում եմ, որ կորյունի բնագրի համապատասխան հատվածը պետք է կարդալ հետևյալ ձեզով:

«Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զդիրս նախ յառակացն Սոզոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայցուցանէ լինել, ասելով, եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զիմը»

ըատ, իմանալ զբանս հանճարոյ», որ և գրեցաւ. իսկ ձեռամբն զքին այնորիկ եանդերձ ուսուցանելով զմանկութեան գրիչս նմին դպրության։ Այսպիսով ստացվում է, որ օտար մարդու, Հռոփանոսի միջոցով ոչ թե գրվել է Մեսրոպի թարգմանությունը, այլ պատրաստվել են նույն դպրության, այսինքն Հռոփանոսի դպրության մասնագետներ, և ոչ թե «մանուկներին սովորեցրել են հայերեն գրել և պատրաստել են նրանց հայերենի համար գրագիրներ», ինչպես մեկնում է Արեղյանը։

Բնագրի այսպիսի ճշումից հետո ես տալիս եմ ամբողջ հատվածի թարգմանության իմ վարիանտը Արեղյանի թարգմանության համագրությամբ՝ կարեոր տարբերությունները երկու գեպքում ել ընդգծելով։

Իմը

Արեղյանինը

Եվ այնտեղ, նույն քաղաքում գտավ հունական դպրության մի ժերականի, Հռոփանոս անունով, որի միջոցով նշանագրերի բոլոր տարբերությունները՝ նուբըն ու կոշտը, կարձն ու երկարը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես կարգավորելով ու վերջացնելով՝ թարգմանության ձեռնարկեց երկու մարդու՝ իր աշակերտների հետ, որոնցից առաջինի անունը Հովհան էր, եկեղյաց գավառից, իսկ երկրորդինը՝ Հովհանի, Պաղանական տնից. Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը նախ՝ «Սողոմոնի առակներից», որտեղ հենց սկզբում հանձնարարվում է ծանօթ. լինել իմաստությանը՝ ասելով, թե «Ճանաչել իմաստությունն ու խրամը, իմանալ հանճարի խոսքը», որ և գրվեց. իսկ այն ժերականի

Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դըպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, որի ձեռավ նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարձն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, եկեղյաց գավառից, իսկ երկրորդինը՝ Հովհանի, Պաղանական տնից. Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանօթ լինել իմաստության, ասելով, թե «Ճանաչել գիմաստութիւն և ըգիրատ, իմանալ զբանս հանճա-

շնորհիվ՝ միաժամանակ մանուկ-ներին սովորեցնում էին՝ [պատրաստելով] նույն դպրության երականներ:

բոյ», որ և գրվեց այն գրագրի ծեռով. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին գրազիթներ [պատրաստելով] նույն դպրության համար:

Բնագրային այս շտկումներն ու պարզաբանումները կատարելուց հետո մեզ մնում է պարզել երեք կարևոր խնդիր ևս. նախ՝ այն, թե ինչ են նշանակել նուրբ, կարճ, երկար և այլ տերմինները կորյունի ժամանակ, երկրորդ՝ այն, թե ինչ անհրաժեշտություն ուներ Մեսրոպը կարգավորելու իր հորինած տառերի նրբությունը, կարճությունը, երկարությունը և այլն, և երրորդ՝ այն, թե ինչո՞ւ նա այդ ինդրով գիտեց Հռովանոսին:

Վերը մենք արդեն պարզել ենք, որ Կորյունի գործածած նուրբը, լայնը, կարճը և այլն պետք է դիտել ոչ թե որպես անորոշ, պայմանական կամ նկարագրական իմաստ ունեցող բառեր, այլ իրբե հաստատուն, ճշտորոշ իմաստ ունեցող տերմիններ, ինչպես այդ հասկացել են Սարգիսյանը և ժամանք Մարկվարտը։ Պարզ է, որ տերմինների հին իմաստը պետք է պարզել համապատասխան ժամանակի գիտական գրականության տվյալներով։ Ինչպես հայտնի է, հայերը երկար գարեր շատ սերտ կերպով կատված էին հունական դպրությանը, հայրենիքում և արտասահմանում ստանում էին հունական կամ հելլենական կրթություն, կարդում և նույնիսկ դրում հունարեն, հայտնի է նաև, որ հունական դպրության, այսպես կոչված «արտաքին գիտությունների» առաջին անհրաժեշտության գիրքը՝ «Դիոնիսիոս քերականի արվեստն» էր՝ Դիօնիսիոսի քերականության այն ձեռնարկը, որ Մեսրոպի տառերի գյուտից քիչ անց թարգմանվեց հայերենի և ունեցավ իր բազմաթիվ հայ մեկնիչները։ Դա հին բանարվեստի սեղանի գիրքն էր, առանց դրան չկար լեզվի ոչսուցում։ Պարզ է, որ գիրքը, իհարկե, հունարեն բնագրով, պետք է ծանոթ լիներ ամեն մի կրթված հայի, որ սովորել էր հունարեն և մանավանդ հետաքրքրվում ու զբաղվում էր լեզվական հարցերով, հետաքրքր և Մեսրոպին ու Կորյունին։ Այստեղից բնականաբար հասկանալի է, թե ինչո՞ւ պետք է տառերի վերաբերյալ Կորյունի գործածած տերմինների իմաստը հասկա-

¹ Գրաբար «Ճեռամբն» ավելի հաճախ նշանակում է օնորիիվ, միջոցով, բան ձեռիչով, այսինքն՝ ունի կապական գործածություն։

նալու համար դիմել Դիոնիսիոսի քերականության հենց այն բաժնին, որտեղ խոսվում է տառերի մասին։ Այստեղ ՊԵΡΙ ΣΤΟΙΧΣΙΟΥ «Ճառի մասին» անվանված բաժնում, որ հայերեն հետագա թարգմանության մեջ անվանվում է «Յաղագս տառի», ի միջի այլոց կարդում ենք.

«Ճառերը քսանչորս հատ են ա-ից մինչև ա... Զայնավոր ներից երկար են երկուսը՝ յ և օ, կարն են երկուսը և և օ...»

Մնացած բոլոր տասնվեցը բաղաձայններ են.... Նրանցից նուրբ են երեքը՝ չ, ո, ՛, քանձը են երեքը՝ ֆ, ջ, չ....»

Բաղաձայններից կրկնակ են երեքը չ, է, փ: Կրկնակ են կոչվում սրանք նրա համար, որ յուրաքանչյուրը բաղկացած է երկու բաղաձայնից....»¹

Ինչպես պարզ երեւում է այս հատվածական մեջքերումներից, այստեղ արդեն կան կորյունի գործածած տերմիններից գլուխն համընկնող տերմիններ, այն է կարն, երկոր, նուրբ, կրկնակ:

Մնում է որոշել մնացած երկուսը, այն է՝ լայն և առանձին, կորյունի բնագրից պարզ երեւում է, որ նրա գործածած 6 տերմինը կազմում են երեք զույգ, որոնց մեջ մեկը մյուսի հականիշն է, այսպես՝ կարն և երկար, նուրբ և լայն, առանձին և կրքեակ: Առաջին զույգը Դիոնիսիոսի քերականության մեջ կա նույնությամբ (կարճ և երկար). Երրորդ զույգից կա մեկը՝ կրկնակ (կորյունի մոտ կրկնավոր կամ կրկնահար), որ ինարկե նույնն է), բայց իսպառ բացակայում է նրա հականիշը, որը պիտի լինի միայնակ կամ առանձին: Բայց քանի որ Դիոնիսիոսն ասում է, որ «կրկնակ են կոչվում սրանք նրա համար, որ յուրաքանչյուրը բաղկացած է երկու բաղաձայնից», այստեղից բը խում է, որ այդ բաղաձրիչ բաղաձայնները իրենք կրկնակ չեն, հետեւաբար միայնակ են կամ առանձին: Ուրեմն առանձին ասելով կորյունը նկատի է ունեցել հենց այդ ոչ կրկնակ բաղաձայնները, որոնց և ինքը տվել է այդ անունը զույգ տերմինների հականիշները ապահովելու համար: Ինչ վերաբերում է երկրորդ զույգին², ապա միանգամայն ակնհայտ է, որ այստեղ լայն բառը գործածված է իբրև նուրբ տերմինի հականիշ (բնագրում

¹ Аничные теории языка и стиля, М.—Л., 1936թ. էջը 106—107 և Н. Адониц—Дионисий Фрак., Петр., 1915թ. էջը 6—7:

² Կորյունի բնագրում այս զույգ տերմինները այլ հաջորդականություն ունեն, բայց մենք վերլուծումը և բացատրությունը դյուրացնելու նպատակով այդ խախտեցինք:

նրբագույն և լայնագույն): Իբրև նուրբ բառի հականիշ բնականաբար պետք է սպասվեր սովար, քավ, հույը, քանձը, կոշտ ածականներից մեկն ու մեկը, քանի որ լայնը նեղի հականիշն է և ոչ թե նուրբի: Սակայն պետք է ընդունել, որ Կորյունի բնագրի մեջ նուրբին լայնը հակագրողը լայնը հասկացել է իբրև նուրբի հականիշ:

Զի բացառվում այնպիսի հնարավորություն, որ լայն բառը ունենար կոչու, կոպիտ իմաստ, քանի որ, ինչպես հայտնի է, խոչոր բառն էլ, որ մանրի, փոքրի հականիշն է, այնուամենայնիվ հաճախ գործածվել և գործածվում է կոշտ, կոպիտ իմաստով (տես ՆՀԲ և այլն), իսկ լայն և խոշոր բառերը իմաստով իրար բավական մոտ են:

Սակայն լայն բառի առթիվ մի ուրիշ տարակուսանք էլ կա: Խնդիրն այն է, որ այդ բառը ունեն Կորյունի ոչ բոլոր ձեռագրերը, և բնագրի մեջ առաջին անդամ մտցրել է Մ. Աբեղյանը 1941 թվին՝ հենվելով Գ. Տեր-Մկրտչյանի հետազոտության և ձա, ձք ձեռագրի տվյալների վեա: Արդյոք Կորյունի սեփական բառն է դա, թե հետազում որեէ արտագրողի կամ խմբագրողի կողմից է մուծված նրա ձեռագրի մեջ եղած նախնական մի այլ բառի փոխարեն, որը կարող էլ դուրս մնացած կամ անձանաշելիորեն աղավաղված լինել արտագրությունների ժամանակ, այժմ դժվար է լուծել Այնուամենայնիվ պարզ է, որ նուրբ աերմինի կողքին պիտի լիներ նրա հականիշը քավ, քանձը, կոշտ, կոպիտ, ստվար իմաստով, այնպես, ինչպես այդ պահանջում էր այն ժոմանակվա քերականական արվեստը: Հասկանալի է, որ քանի դեռ հայերենի չէր թարգմանված Դիոնիսիոսի քերականությունը, նրա տերմինները հայերը կարող էին մոտավոր հոմանիշներով արտահայտել: Դեռ ավելին, նույնիսկ քերականության կանոնական թարգմանության մեջ, որ բարերախտաբար մեզ մնացել է հնագույն դարերից, հունական բնագրի մեկ տերմինի դիմաց, ինչպես ես պարզեցի այս առթիվ կատարած որոշումների ընթացքում, քերականության թարգմանության և մեկնությունների մեջ ունենք երեքից չորս տերմին: Այսպես օրինակ հունարեն Փիլօս (նուրբ) տերմինի դիմաց ունենք նուրբ, բարակ, լերկ, դերկ, իսկ ծածու (թավ) տերմինի դիմաց՝ քավ, յօյր, խաժ, ստուար, քանձը: Այստեղից բխում է, որ ինչպես Կորյունը, այնպես էլ նրա հավանական խմբագիրը նույնպիսի աղատությամբ կարող էին հուն. ծածու (թավ) հասկացության հա-

մար թաւ, յոյր, խաժ, ստուար, թանձր բառերից մեկի փոխաշըն գործածել լայն բառը նոռյն իմաստով:

Գալով այն հարցին, թե ինչու Կորյունի երեք զույգ տերմիններից երկու զույգը գործածված են դրական աստիճանով (կարճ, երկայն, առանձին, կրկնավոր), իսկ մեկ զույգը՝ բաղդատական աստիճանով (գույն ածանցով՝ նրբագույն, լայնագույն), ապա սրա պատասխանը տալու համար անհրաժեշտ է նախ զըտնել մեր ծրագրած երկրորդ հարցի պատասխանը. այն է, թե ինչ անհրաժեշտություն ուներ Մեսրոպը որոշելու, կարգավորելու յուր հորինած (և արդեն նրանցով այրբենարան-դասագիրք կազմած) տառերի նրբությունը, լայնությունը, կարճությունը, երկարությունը և այլն: Արդ, անցնելով այս կարեոր հարցի կոնկրետ քննությանը՝ մենք զգուշացնում ենք, որ այս դեպքում չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ քերականության մեջ տառ, զիր, նշանագիր (հունարեն ΓΡΑΜΜΑΤΑ, ΣΤΟΙΧΣΙΟΥ) տերմիններով հին քերականները (դժբախտաբար և նորերից ու մանք, նույնիսկ մեր օրերում) հավասարագես հասկանում էին և՝ տառը, այսինքն հնչյունի, ձայնի նշանը, և՝ հնչյունը, այսինքն ձայնը:

Երկրորդ հանգամանքը, որ այս դեպքում չպետք է մոռանալ, այն է, որ հին քերականները, որոնք երկար ու բարակ խոսում են տառերի տեսակների մասին, տալիս են տառերի ամենամասնամասն դասակարգությունը (կարճ, երկար, նուրբ, լերկ, կրկնակ, անձայն, միջակ և այլն և այլն), միշտ նկատի ունեն տառերի հնչյունը և ոչ թե տառանշանը, որովհետև հին քերտկաններին երեք չին զբաղեցրել տառաձեռները, տառատեսակները, մեծատառն ու փոքրատառը: Միանգամայն հասկանալի է մասնավանդ նաև այն, որ հայր չէր կարող և չի զբաղվել տառերի մեծության ու փոքրության, մեծատառի ու փոքրատառի, և մասնավանդ բոլորագրի, նուրբ զրի և զրի այլ տեսակների հարցով, քանի գեռ այլպիսիները չկային հայ զրչության մեջ, իսկ հայտնի է, որ Մեսրոպը հորինել է միայն մեկ տեսակ գրի, որը միապաղապ է և չունի մեծատառ ու փոքրատառ: Ուրեմն անվիճելի է, որ երբ խոսք է լինում տառերի տեսակների մասին, երբ հները սահմանում են տառերի տարրեր խմբեր, դասեր, այդ պետք է հասկանալ միայն ու միայն հնչյունների իմաստով: Ուստի և, երբ Կորյունը կամ քերականները ասում էին երկար կամ կարճ, նուրբ կամ լերկ, առանձին կամ կրկնավոր, հասկանում

էին ոչ թե տառերի տեսակներ կամ ձեւեր, այլ հնչյունների տեսակներ: Այսպես օրինակ, քերականը զան կրկնակ է համարում ոչ թե նրա համար, որ նա բաղկացած է երկու տառից, այլ՝ որ բաղկացած է երկու հնչյունից, ինչպես ինքն է ասում՝ սից և դից: Նույն ձեռվ պ, կ, տ համարում է նուրբ, բարակ, փ, ք, թ՝ լերկ, թանձր ոչ թե տառերի, գրերի, այլ ենջման տարբերությունը նկատի ունենալով և այլն¹:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ հեշտությամբ կարող ենք հասկանալ, որ Մեսրոպը բոլոր տառերը հորինելուց, անվանելուց, այբբենարս նը և նույնիսկ այբբենարան—ձեռնարկը կազմելուց հետո պիտի զբաղվեր նաև այն հարցով, թե տառերի, այսինքն հնչյունների, որ խմբերի, որ տեսակների մեջ են մըտնելու իր հորինած տառերը ըստ ժամանակի քերականական հասկացողության, այլ ձեռվ ասած՝ նա պիտի զբաղվիր յուր հորինած տառերի գիտական դասակարգման հարցով, քանի որ այդ տառերը պետք է գործածության մեջ դրվեին և ուսուցման նյութ դառնային: Էլ չեմ խոսում այն մասին, որ այսպիսի գիտական դասակարգումը գործնականորեն էլ անհրաժեշտ էր հունարեն բառերի ու անունների հայերեն տառադարձության համար. օրինակ՝ հարկավոր էր սահմանել, թե հայերեն և և է տառերից (այսինքն հնչյուններից) որն է երկար, որը կարճ, որպեսզի հունարեն կարճ ըն հայերենի տառադարձվեր կարծով, իսկ երկար դեմք երկարով: Այսպես էր անշուշտ և մյուս տառերի վերաբերյալ, և հենց այս գործում էր, որ Մեսրոպը կարիք զգաց հմուտ մասնագետ քերականի օգնության, որպեսզի որոշեր հայերեն տառերի (այսինքն հնչյունների) նուրբն ու թափը, կարճն ու երկարը, առանձինն ու կրկնավորը, այսինքն սահմաներ հայերեն հնչյունների գիտական դասակարգությունը (կլասիֆիկացիան): Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչն հունարենը ուներ 24 տառ, իսկ Մեսրոպը հայերենի համար հորինել էր 36 տառ, այսինքն 12 տառով ավելի, Պարզ է, որ այս 12 նոր տառերը (այսինքն հնչյունները) կարիք ունեին գիտական ձանաչման, գիտական անվանման, գիտական «մկրտության»:

¹ Իհարեկ, անմիտ բան կրկներ այօթ քննադատել հին քերականներին նրա համար, որ հնչյունաբանական ճիշտ պատկերացում չունենալով՝ նրանց դեմք բնչյուն էին համարում թ, գ, դ՝ անձայն և այլն: Չի կարելի այսպիս պահանջներով մոտենալ հին քերականներին և Կորյունին:

Այդ 12 տառերն են ը, ժ, լ, խ, ծ, հ, ձ, ճ, յ, չ, ջ, վ, ո, ց:¹ Այս տառերի (հնչյունների) ձնշող մեծամասնությունը, ինչպես տեսնվում է, հենց բաղաձայններ են (ժ, լ, խ, ծ, հ, ճ, յ, չ, ջ, վ, ո, ց) և այն էլ այնպիսինները, որոնք իսկապես որ մեծ գժվարություն պիտի ստեղծեին դասակարգության ժամանակ այն իմաստով, որ հարկավոր էր լրջորեն ծանր ու թեթև անել, որոշել, թե ինչ տեղ են բռնում դրանք իրենց նման, մերձավոր այլ հնչյունների համեմատությամբ: Եվ իրոք, հունարենը ուներ մեկ և հայերենը՝ երկու (լ, դ), հունարենը՝ մեկ ր, հայերենը՝ երկու (ը, ռ), հունարենի մեկ ք-ի դիմաց հայերենը ուներ երկու հնչյուն (ք, խ) ուստի պետք էր որոշել, թե այս զույգերի՝ մեջ որն է բարդ, կամ կրկնավոր, և որն է պարզ կամ տոանձին:

Հունարենի համեմատությամբ ավել էին ծ, ձ, ց, ճ, չ և ժ: պետք էր որոշել, թե սրանցից յուրաքանչյուրը իր լծորդի համեմատությամբ և հունարենի մեջ եղած նման հնչյունների համեմատությամբ ինչ տարբերություն ունի, այսինքն, թե սըրանցից որն է մյուսի համեմատությամբ ավելի նուրբ կամ ավելի թափ (լերկ, կոշտ) օրինակ ծ, ձ, ց-ից որն է որից ավելի նուրբ, որը՝ ավելի թափ (լերկ կամ կոշտ): Հենց այստեղ էլ ես գտնում եմ բանալին այն հանելուկի, թե ինչն կորյունի գործածած երեք զույգ տերմիններից միայն մեկ զույգն է բաղդատական աստիճանով, իսկ մնացած երկու զույգը դրական աստիճանով են: Այս հարցը որին, ի միջի այլոց, ոչ մի բանասեր արժանի ուշադրություն չի դարձրել, շատ կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ մեծ նպաստ է տալիս որոշելու համար թե ինչ օգնություն է տվել Հռոփանոսը Մեսրոպին, այլև այն, որ հաստատում է, որ Կորյունը շատ լավ գիտեր, թե ինչ է արել Մեսրոպը Սամոսատում, հետևաբար և ժամանակակից ու ականատես մարդ էր և ոչ թե ուշ ժամանակի հեղինակ, որը ինչ-որ անիբական ու անհավանական բաներ է վերագրել Մեսրոպին, ինչպես այդ ուղում է պնդել Զալախիշվիլին:

Քանի որ, ինչպես ապացուցեցինք, Երբագույն և լայնագույն տերմիններով Կորյունը մատնանշում է Դիոնիսիոսի քերականության վկանը (նուրբ) և ծասս (թափ) հասկացություննե-

¹ Թեև այբուբենի կարգով հուն. թ-ի տեղում գտնվում է հայերեն ո-ն և ուրեմն նոր ու հունարենից տարբեր պետք է համարել ոչ թե ո-ն, այլ ը-ն, այնուամենայնիվ թվում է, թե այստեղ որոշ թյուրեմացություն կա, և չնայած ընկեր Անապյանի պնդումին՝ հուն. թ-ի դիմաց պետք է դնել հայերեն ը-ն:

ըը, ապա միանգամայն հասկանալի է, որ հունարենի համեմատությամբ հայերենում ավել եղած տառերից (Հնչյուններից) հենց նուրբերի ու թավերի համար էր հարկավոր որոշել, թե նրանցից որն է ավելի նուրբ (Նրբագույն), որը՝ ավելի քավ (լայնագույն) և ահա թե ինչու Հայերենում, ինչպես և հունարենում, կային պ-բ-փ, կ-գ-ք, տ-դ-թ եռաստիճան հնչյունները, որոնց համար Դիոնիսիոսի քերականության մեջ պատրաստի պատասխան արդեն կար. դրանցից պ-կ-տ ճանաչված էին իրեն ավելի նուրբ քան բ-գ-դ, իսկ փ-թ-ք՝ իրեն ավելի թավ քան բ-գ-դ, ուստի և քերականության մեջ պ-կ-տ, դասված էին նուրբերի շարքը, փ-թ-ք՝ թավերի, իսկ բ-գ-դ՝ որ «ավելի նուրբ էին քան թավերը և ավելի թավ էին քան նուրբերը» դասված էին միջակների շարքը: Արդ, Մեսրոպը հորինել էր նաև ծ-ձ-ց և ճ-ջ-չ նըրության ու թավության ճիշտ նույնպիսի ներքին տարբերություն ունեցող տառերը, որոնց համապատասխան տառեր հունարենում չկային: Այստեղից միանգամայն հասկանալի է, թե ինչու նա պիտի մտահոգվեր այն հարցով, թե այդ տառերից որոնք են ավելի նուրբ (Նրբագույն) և որոնք են ավելի քավ (լայնագույն), այսինքն ծ-ճ-ն է ճ-ի համեմատությամբ ավելի նուրբ կամ թավ, թե՛ յ-ն, ճ-ն է ջ-ի համեմատությամբ ավելի նուրբ կամ թավ, թե՛ չ-ն: Այստեղ իրոք որ համեմատելու, բաղդատելու գործ կար, և հենց այդ պատճառով է Կորյունը այս հնչյունների մասին խոսելիս գործածում համեմատական կամ բաղդատական աստիճանի ածականներ (Նրբագույն և լայնագույն): Այն, անվիճելի է, որ եռաստիճանություն ունեցող այս բաղաձայնների համար հարկավոր էր որոշել, թե որն է ավելի նուրբ և որը՝ ավելի թավ, ճիշտ այնպես, ինչպիս հունական քերականության մեջ արդեն որոշված էր, թե նույնպիսի եռաստիճանություն ունեցող պ-բ-փ, տ-դ-թ, կ-գ-ք հնչյուններից որն է ավելի նուրբ, որը՝ ավելի թավ: Այսպես, խոսելով հատկապես բ-գ-դ-ի մասին Դիոնիսիոսի քերականությունը բացատրում է, որ «զրանք միջակ են կոչչում նրա համար, որ ավելի քավ են, քան նուրբերը, և ավելի նուրբ են, քան թավերը: Եղ մասնավորապես բ-ն միջակ է պ-ի ու փ-ի միջն, գ-ն միջակ է կ-ի ու ք-ի միջն, դ-ն միջակ է թ-ի ու տ-ի միջն:»¹

¹ Актические теории языка и стиля. № 107. Բա. թարգմ. մեջ հայա արտահայտված է простой «հասարակ» տերմինով, որ ես դարձրի «հուրբ»՝ հետեւլով մեր հին թարգմանիչներին:

Այսպիսով հույն քերականը հունարենի համար նշել է երեք նուրբ, երեք թավ և երեք միջակ հնչյուն, որ ավելի թավ են, քան նուրբերը և ավելի նուրբ են, քան թավերը։ Այս հատվածը Դիոնիսիոսի հայերեն թարգմանության մեջ բավական ընդարձակված է՝ մեջ առնելով նաև հայերենի այն հնչյունները, որոնք հունարենում չկան, բայց ըստ բնույթի և ըստ էության նման են։

Հատվածաբար տեղ եմ բերում այդ մասի հայերեն հնագույն թարգմանությունը՝ զուգահեռ կերպով տալով և աշխարհաբար իմ թարգմանությունը։

Եւ են սոքա՝ նուրբք տասն, ստուարք ինն և միջակք եւթն։ Եւ միջակք վասն այնորիկ անուանցան, զի քան զնուրբսն յոյրք են և քան զյոյրսն նուրբք, Եւ են միջակք եւթնի մէջ բարակացն և յոյրից. բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ, ՛, եւ թաւք ինն. փ, ք. խ, թ, ց, ւ ջ, չ, ու Եւ ղերկք տասն. պ, կ, տ, զ, ն, ծ, շ, մ, ս... Եւ բենն... քան զմենն և զպէն խաժ է, և քան զփիւրն բարակ. Եւ գիմն... քան զկենն թաւ է, քան զքէն և զիւէն լերկ..¹

Եվսրանք են՝ նուրբեր տասնը, թավեր ինն և միջակներ յոթը: Եվ միջակ նրա համար անվանվեցին, որ ավելի թավ են քան նուրբերը և ավելի նուրբ, քան թավերը: Եվ յոթ միջակներըն են նուրբերի ու թավերի միջն բ, գ, դ, ձ, ղ, ճ, շ, մ, ս, ր: Եվ բն տվելի թավ է, քան ս-ն ու պ-ն, և ավելի նուրբ, քան փ-ն: Եվ դ-ն ավելի թավ է, քան կ-ն և ավելի նուրբ, քան ք-ն և խ-ն...²

Զայն միջակ է սէի, զայի և ցոյի... եւ ձէն՝ ծայի և ջէի. Եւ ժէն՝ շայի և չայի, զի քան զշայն թաւ է և քան դշայն լերկ,²

Զ-ն միջակ է ս-ի, զ-ի ու ց-ի (միջն) և ձ-ն՝ ծ-ի ու ջ-ի և ժ-ն շ-ի ու չ-ի (միջն), որովհետեւ ավելի թավ է, քան շ-ն, և ավելի նուրբ է, քան չ-ն:

Ինչպիս տեսնում ենք, սա հետևողական, թեկուզ և այսօրվա իմաստով ոչ լրիվ գիտական, մի սիստեմ է, որով հնչյուն-

¹ Մինչև այստեղ համարվածախանում է հունարեն բնագրին թեկ ունի հնչյունների քանակի տարբերություն. շարունակությունը հայ թարգմանների ուժելացրածն է:

² «Արուեստ Դիոնիսեայ քերականի», Աղոնցի հրատար. էջթ 4—5:

ների թափությունն ու սրբությունը սահմանվում էին նման ուրիշ հնչյունների համեմատությամբ։ Այս նույն սիստեմից եխելով է, որ հայ թարգմանիչը իրենից ավելացրել է վերոքերյալ հատվածը («ձայն միջակ է...»), որի մեջ և որոշել է հունարենին անծանոթ և ուրեմն քերականության մեջ չքննված ձ-ձ-ց և ջ-ջ-չ հնչյունների նրբության ու թափության աստիճանը¹, Ըստ այս սիստեմի, ձ-ն ավելի նուրբ է (նրբագույն), քան ց-ն ու ճ-ն, իսկ ց-ն, ջ-ն ու չ-ն ավելի քաղ են (լայնագույն), քան ձ-ն ու ճ-ն և կամ, այլ ձեռվ ասած՝ ձ-ն և ճ-ն պակաս նուրբ են, քան ծ-ն, և պակաս թափ են, քան ց-ն ու չ-ն։ Այդ պատճառով էլ Դիոնիսիսոսի քերականության հայ թարգմանության մեջ ծ-ն նուրբերի կարգն է դասված իրեւ ավելի նուրբ, քան ձ-ն ու ճ-ն, ց-ն, ջ-ն-ու չ-ն՝ թափերի կարգը, իրեւ ավելի քաղ, քան ձ-ն ու ճ-ն. Վերջիններս էլ մնացել են միջակների կարգում, որովհետև ոչ ծ-ի չափ նուրբ են և ոչ մյուսների չափ թափ²,

Պարզ է, որ այն ժամանակվա համար այսքան լուրջ հարցերը չեին կարող չզբաղեցնել այն մեծ մարդուն և խոհուն գիտնականին, որը տարիների տքնումից հետո կարողացավ հորինել հայերեն գրերը և սկիզբ գնել Մեսրոպյան գիր ու զրականությանը։ Հասկանալի է նաև, որ հունարեն տառերի կարգով ու հունական գիտության տվյալներով հորինած իր այրութենի մեջ առկա և հունականից տարբերվող տառերի հնչյունարանական արժեքի ու դասակարգման հարցը չեր կարող վրիպել Մեսրոպի ուշագրությունից։ Նա անհրաժեշտություն ողիտի զգար որոշելու ծ-ձ-ց, ճ-ջ-չ և մյուս նոր տառերի նրբությունն ու թանձրությունը, և անշուշտ հենց այդ է պատմում Կորյունը մեզ զբաղեցնող հատվածում։ Մեսրոպը իրոք որ պիտի որոշեր, թե իր հորինած տառերի մեջ որն է համեմատարար ավելի նուրբ և ավելի քաղ, իսկ այդ բանը նա պետք է աներ հունական քերականության սիստեմով և այդ զպրության մասնագետի օգնությամբ։

¹ Ես մեթոդական նպատակով անտեսում եմ դ-ը ծ-2, իր-ը և այդ հնչյունների հարցը, որոնց նրբությունն ու թափությունը նույնպես տալիս է հայ թարգմանիչը. իմ նպատակը հնչյունների համեմատությունը չէ, այլ համեմատության այն մեթոդը, որ ունեն հները։

² Այստեղ նկատվում է 2 սխալ, ճ-ն պետք է լիներ ծ-ի հետ, իբրև նուրբ, իսկ ջ-ն ձ-ի հետ, իրեւ միջակ, բայց ոչ մի իմաստ չւնի այն ժամանակվա հնչյունարանական ըմբռնումների դեմ վիճելը։
Աշխատություններ—12

Սակայն կարող են հարց տալ, թե ինչու Կորյունը չի խոս-
սում միջակների մասին ևս, կամ ինչու իր տերմինների մյուս
զույգերը գործածում է ոչ թե բաղդատական, այլ գրական աս-
տիճանով։ Ես ավելորդ եմ համարում մանրամասն խոսել այն
մասին, թե ինչու Կորյունը ոչինչ չի ակնարկում միջակների վե-
րաբերյալ քանի որ այս նիստեմից պարզ երևում է, որ ավելի
նուրբն ու ավելի թափը (նրբագույնն ու լայնագույնը) որոշելլ
ինքնին նշանակում է որոշել և՛ նուրբը, և՛ թափը, և՛ միջակը։
Ավելորդ չեմ համարում, սակայն խոսել այն մասին, թե ինչու
Կորյունը մյուս զույգերի համար գործածել է ոչ թե բաղդա-
տական աստիճանի ածականներ, այլ գրական։ Քննենք նաև ա-
ռանձինի և կրկնակի (կամ կրկնավորի, կրկնահարի) հարցը։ Քե-
րականության արվեստը սովորեցնում է, որ բաղաձայններից կը ըկ-
նակ կոչվում են երեքը Հ, Է, Վ։ Կրկնակ նրանք կոչվում են նրա
համար, որ յուրաքանչյուրը բաղկացած է երկու բաղաձայնից։
Հ-Ն՝ Ծ-Ից ու Ծ-Ից, Է-Ն՝ Կ-Ից ու Ծ-Ից, Վ-Ն՝ Պ-Ից ու Ծ-Ից¹։

Հայ թարգմանիչը գրում է. «Եւ կրկնակք ասին, վասն զի մի
մի իւրաքանչիւր ոք ի սոցանէ յերկուց ձայնակցաց բաղկացեալ
է»², և բացատրում է, որ զ-Ն բաղկացած է ս-Ից ու դ-Ից, Խ-Ն՝
երկու ք-Ից, Չ-Ն՝ երկու ս-Ից, Ա-Ն՝ երկու ը-Ից։ Պարզ է, որ
կրկնակների բաղադրիչները, օրինակ ս-Ն և դ-Ն հակադիր են
կրկնակին (օր. չին), այսինքն կրկնակ չեն (առանձին են, ինչ-
պես անվանում է Կորյունը), և ոչ թե ավելի պակաս կրկնակ, և
ընդհակառակն, կրկնակը իր բաղադրիչներից տարբերվում է
նրանով, որ ինքը պարզ չէ (առանձին չէ), և ոչ թե նրանով, որ
ինքը ավելի կրկնակ է, քան իր բաղադրիչները։ Պարզ է, ուրեմն
որ Կորյունը չէր կարող գործածել կրկնակագույն կամ կրկնա-
վորագույն (կամ կրկնահարագույն) և առանձնագույն տերմին-
ները համեմատական կամ բաղդատական աստիճանով, որովհետեւ
այս գեպքում նա գործ ուներ ոչ թե որակի աստիճանի տար-
բերությունների, այլ՝ կազմության, որակի դանաղանություն-
ների հետ։


Ճիշտ նույն ձևով Կորյունը չէր կարող ձայնավորների հա-
մար ասել կարճագույն և երկայնագույն (ավելի կարճ և ավելի՝
երկար), որովհետև այստեղ էլ չկար ավելի կարճի ու ավելի եր-

¹ Актичные теории, § 107.

² Адони—Дионисий Фр., § 8.

կարի խնդիրը, քանի որ Մեսրոպի հորինած ձայնավորներից միայն մեկն էր տարբերվում հունարենի ձայնավորներից, այն է ըստ, իսկ հունարենի ձայնավորների կարճն ու երկարը վաղուց ստհմանված էին. Ուրեմն Մեսրոպին մնում էր միայն որոշել, թե իր ձայնավորներից որո՞նք պետք է գասվեն կարճերի (և ոչ թե ավելի կարճերի) խմբի մեջ, և որո՞նք՝ երկարների¹ (և ոչ թե ավելի երկարների) խմբի մեջ. Այս թե ինչու Կորյունը կարճի ու երկարի մասին խոսելիս չէր կարող այդ ածականները բաղդատական աստիճանով գործածել և չի գործածել:

Այսպիսով այն հանգամանքը, որ Կորյունը իր երեք զույգ տերմիններից միայն նուրբն ու լայնն է գործածել բաղդատական աստիճանով, ավելցրդ անդամ վկայում է, որ նա գործին տեղյակ, ժամանակակից, թերևս նաև մասնակից անձնավորություն էր և քաջ զիտեր, թե ինչ է արվել Սամոսատում. Այսպիսով մենք լուծեցինք նաև այս կարևոր հարցը. Կորյունի անմիջական ակնարկներով և այն ժամանակվա քերականական տըվյաններով պարզեցինք, որ Մեսրոպը Սամոսատում Հռոփանոսի օգնությամբ զիտականորեն որոշել է, թե իր հորինած տառերից որո՞նք են համեմատաբար ավելի նուրբ (այժմյան տերմինով խուլ), որո՞նք են ավելի թափ (այժմյան տերմինով՝ չնչեղ), որո՞նք են կարճ, որո՞նք՝ երկար, որո՞նք են կրկնակ կամ կրկնավոր (այժմյան տերմինով՝ բարդ), և որո՞նք առանձին (այժմյան տերմինով՝ պարզ). Մրանով մենք պարզեցինք նաև Հռոփանոսի ցույց տված օգնության բնույթը, որ ոչ այլ ինչ է եղել, քան քերականական-հնչյունաբանական կոնսուլտացիա, և ոչ թե տառերի գծագրություն, տառերի ձևակերպում և մանավանդ տառատեսակների հորինաւմ. Վերջին երեք ենթադրական տեսակետի կողմանակիցները չեն հենվում պատմական տվյալների վրա, հաշվի չեն առնում այն ժամանակվա զիտական ըմբռնումներն ու տառերի ուսմունքը և հակասությունների մեջ են ընկնում Կորյունի Յ զույգ տերմինները մեկնենաւ:



¹ Քերականության մեջ կա ձայնավորների Յ-բդ խումբ և՛ երկամանկի, որի մեջ մտնում են այն ձայնավորները, որոնք զուրս են մնում մյուս երկու խմբերից, այսինքն կարող են և՛ կաբճ լինել, և՛ երկար:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003643

[104.]

A II
23395